ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ ՈՐՈՇՈՒՄ

N 180 – Ա **13 մայիսի 2020թ.**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 4-Ի N 15-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի և «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի և 19-րդ հոդվածի դրույթներով

որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի 2011 թվականի փետրվարի 4-ի «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի երեխայի տարիքը որոշող հանձնաժողովի կազմը հաստատելու մասին» N 15-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը՝ որոշման 1-ին կետը շարադրել նոր խմբագրությամբ՝

«1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի երեխայի տարիքը որոշող հանձնաժողովի կազմը՝

Սանոսյան Գնել	- ՀՀ Գեղարքունիքի մարզպետ, հանձնաժողովի նախագահ
Գրիգորյան Նարեկ	- ՀՀ Գեղարքունիքի մարզպետի տեղակալ
Վարդանյան Լուսինե	- մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետի պաշտոնակատար, քարտուղար
Զազյան Կարեն	- մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ
Գալոյան Մամիկոն	- մարզպետարանի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի պետ

Սաֆոյան Աննա - մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության առողջապահության բաժնի պետ

Բադոյան Արմեն - մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության սոցիալական ապահովության բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար

Բաղալյան Օքսեն - ՀՀ ոստիկանության Գեղարքունիքի մարզային վարչության

Գավառի բաժնի անչափահասների գործերով բաժանմունքի պետ /համաձայնությամբ/»:

13.05.2020

X

ԳՆԵԼ ՍԱՆՈՍՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏ՝ Подписано: SANOSYAN GNEL 1710830069

Գ. ՍԱՆՈՍՅԱՆ
ք. Գավառ